Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2023 թվականի օգոստոսի 27-ի

թիվ 1 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ ՈԱԲ հաշվետվության և 2023-2024 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունների քննարկում և ներկայացում:

/ Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի ժ/պ Քանաքարա Հայրապետյան /

2. ԳՊՀ ՈԱԲ 2022-2023 ուսումնական տարվա գործողությունների պլանի մշտադիտարկման մասին:

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Նոնա Մուրադյան/

3.ԳՊՀ էլեկտրոնային ուսուցման Learn.gsu.am համակարգի մշտադիտարկման արդյունքների մասին:

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մարիամ Նախրատյան/

3. Ընթացիկ հարցեր:

1. **Լսեցին** - Քանաքարա Հայրապետյանը ներկայացրեց Որակի ապահովման բաժնի 2022–2023 ուսումնական տարվա գործունեության հաշվետվությունը և 2023–2024 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները:

Ներկայացվեցին տարվա ընթացքում իրականացված ներքին որակի ապահովման գործընթացների արդյունքները, ներառյալ ուսանողների, դասախոսների, շրջանավարտների և գործատուների շրջանում անցկացված հարցումների ամփոփ վերլուծությունը, ՄԿԾ-ների մշտադիտարկման արդյունքները, ինչպես նաև նախորդ տարվա բարելավման միջոցառումների կատարման ընթացքը:

Զեկուցողը նշեց, որ զարգացման առաջնահերթ ուղղություններ են շահակիցների մասնակցության ընդլայնումը ՄԿԾ-ների բարելավման գործընթացներում, թվային կրթական միջավայրի կատարելագործումը, որակի ներքին ապահովման գործընթացների փաստաթղթավորման և տվյալահեն որոշումների կայացման ամրապնդումը:

Քննարկեցին - Նիստի մասնակիցները կարևորեցին նախորդ տարվա հաշվետվության արդյունքների օգտագործումը նոր ուսումնական տարվա պլանավորման հիմքում: Առաջարկվեց յուրաքանչյուր զարգացման ուղղության համար սահմանել չափելի արդյունքներ, կատարման ժամկետներ, ինչպես նաև ապահովել շահակիցների պարբերական մասնակցությունը գործողությունների գնահատմանը:

Որոշեցին

1. Հաստատել ՈԱԲ 2022–2023 ուսումնական տարվա հաշվետվությունը:
2. Հաստատել 2023–2024 ուսումնական տարվա զարգացման հիմնական ուղղությունները:
3. Մշակել յուրաքանչյուր առաջնահերթության իրականացման գործողությունների ծրագիր՝ սահմանելով կատարման ժամկետները և գնահատման ցուցանիշները:
4. Հաշվետվությունն ու զարգացման ուղղությունները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

2. **Լսեցին** - Նոնա Մուրադյանը ներկայացրեց ՈԱԲ 2022–2023 ուսումնական տարվա գործողությունների պլանի մշտադիտարկման արդյունքները:

Արձանագրվեց, որ նախատեսված միջոցառումների գերակշիռ մասն իրականացվել է սահմանված ժամկետներում: Առանձին գործողությունների կատարման ընթացքում ի հայտ են եկել կազմակերպչական դժվարություններ, որոնք պահանջում են լրացուցիչ միջոցառումներ:

Քննարկեցին - Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ գործողությունների պլանի մշտադիտարկումը պետք է իրականացվի ոչ միայն տարվա ավարտին, այլև պարբերաբար՝ ապահովելով ընթացիկ գնահատում և ժամանակին բարելավումներ:

Առաջարկվեց յուրաքանչյուր միջոցառման համար սահմանել արդյունավետության գնահատման չափորոշիչներ և պարբերական հաշվետվությունների ներկայացման միասնական ձևաչափ:

Որոշեցին

1. Հաստատել գործողությունների պլանի մշտադիտարկման արդյունքները:

2. Չկատարված կամ մասնակի իրականացված միջոցառումները ներառել 2023–2024 ուսումնական տարվա գործողությունների պլանում:

3. **Լսեցին** - Մարիամ Նախրատյանը ներկայացրեց Learn.gsu.am էլեկտրոնային ուսուցման համակարգի մշտադիտարկման արդյունքները: Նշվեց, որ դասընթացների մեծ մասում ապահովված են ուսումնական նյութերի, հանձնարարությունների և գնահատման բաղադրիչների տեղադրումը, սակայն առանձին դասընթացներում անհրաժեշտ է թարմացնել ուսումնական նյութերը, ամբողջացնել էլեկտրոնային ռեսուրսները:

Ներկայացվեցին նաև ուսանողների և դասախոսների կողմից ստացված առաջարկությունները՝ համակարգի օգտագործման արդյունավետության բարձրացման վերաբերյալ:

Քննարկեցին - Մասնակիցները կարևորեցին թվային ուսուցման միջավայրի շարունակական զարգացումը՝ որպես ուսանողակենտրոն կրթության և կրթության որակի ապահովման կարևոր բաղադրիչ:

Առաջարկվեց ֆակուլտետային պատասխանատուների մասնակցությամբ իրականացնել համակարգի պարբերական ներքին աուդիտ և ապահովել օգտատերերի շարունակական խորհրդատվությունը:

Որոշեցին

1. Ֆակուլտետներին տրամադրել մշտադիտարկման արդյունքների վերաբերյալ անհատական ամփոփ հաշվետվություններ: Մինչև նոր ուսումնական տարվա մեկնարկն ապահովել բացահայտված թերությունների վերացումը:
2. 2023–2024 ուսումնական տարվա առաջին կիսամյակի ավարտին իրականացնել կրկնակի մշտադիտարկում և գնահատել իրականացված բարելավումների արդյունավետությունը:

3. Ընթացիկ հարցեր

Քննարկվեցին ընթացիկ կազմակերպչական հարցեր՝ կապված որակի ապահովման գործընթացների փաստաթղթավորման և ֆակուլտետների հետ համագործակցության կազմակերպման հետ:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ, ակադեմիական քաղաքականության բաժիններ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի

որակի ապահովման բաժնի 2023 թվականի սեպտեմբերի 29-ի

թիվ 2 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ 2017-2018, 2018-2019, 2019-2020, 2020-2021, 2021-2022 ուսումնական տարիների գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների վերաբերյալ:

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Քանաքարա Հայրապետյան/

2. ԳՊՀ առկա ուսուցման 2017-2018, 2018-2019, 2019-2020, 2020-2021, 2021-2022, 2022-2023 ուսումնական տարիների բակալավրիատի կրթական ծրագրով ընդունելության շարժը:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Նոնա Մուրադյան/

3. ԳՊՀ առկա ուսուցման առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծության մասին:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Մարիամ Նախրատյան/

4. Արցախից բռնի տեղահանված և Գավառի պետական համալսարանում կրթությունը շարունակող ուսանողների կրթական կարիքների վերհանմանը միտված հարցաթերթի ստեղծում:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Քանաքարա Հայրապետյան/

5. Ակադեմիական քաղաքականության բաժնի հետ համատեղ 2023–2024 ուսումնական տարվա դասալսումների ժամանակացույցի հաստատման մասին:

   /Զեկուցող՝ ՈԱ բաժնի վարիչի ժ/պ Ք. Հայրապետյան/

1. **Լսեցին** - Քանաքարա Հայրապետյանը ներկայացրեց 2017–2022 ուսումնական տարիների գիտական և ուսումնամեթոդական հրատարակությունների վերաբերյալ ամփոփ վերլուծությունը: Ներկայացվեցին հրատարակությունների քանակական և բովանդակային ցուցանիշները, դրանց բաշխումն ըստ ֆակուլտետների և կրթական ծրագրերի:

Քննարկեցին - Նշվեց, որ անհրաժեշտ է շարունակաբար խրախուսել ուսումնամեթոդական ձեռնարկների և գիտական հրապարակումների պատրաստումը՝ ԳՊՀ դասախոսների մասնագիտական հմտությունների ձարգացման համար:

Որոշեցին

1. Վերլուծության արդյունքները ներկայացնել ԳՊՀ ֆակուլտետների խորհուրդների, ռեկտորատի, գիտական խորհրդի քննարմանը:

2. Լսեցին - Նոնա Մուրադյանը ներկայացրեց 2017–2023 թվականների բակալավրիատի ընդունելության շարժի վերլուծությունը: Ներկայացվեցին ընդունված ուսանողների թվաքանակի փոփոխությունները, ՄԿԾ-ների նկատմամբ դիմորդների հետաքրքրվածության միտումները, ինչպես նաև ընդունելության ցուցանիշների վրա ազդող հիմնական գործոնները:

Քննարկեցին - Մասնակիցներն արձանագրեցին, որ անհրաժեշտ է ընդլայնել մասնագիտական կողմնորոշման աշխատանքները հանրակրթական դպրոցներում, ակտիվացնել համալսարանի ներկայացվածությունը տեղեկատվական հարթակներում և զարգացնել համագործակցությունը դպրոցների հետ:

Որոշեցին

1. Ընդունելության շարժի վերլուծությունը ներկայացնել ռեկտորատին:
2. Նախապատրաստել դիմորդների ներգրավման միջոցառումների ծրագիր:

3. Լսեցին - Մարիամ Նախրատյանը ներկայացրեց առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման հարցման արդյունքների վերլուծությունը: Արձանագրվեց, որ ուսանողները կարևորում են ակադեմիական խորհրդատվության, էլեկտրոնային ուսուցման միջավայրի կիրառման, գրադարանային ծառայությունների և ուսումնական գործընթացի վերաբերյալ լրացուցիչ իրազեկման անհրաժեշտությունը:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները տրամադրել ֆակուլտետների ղեկավարներին:

2. Կազմակերպել առաջին կուրսի ուսանողների համար լրացուցիչ խորհրդատվական հանդիպումներ՝ ներգրավելով ուսանողական ինքնակառավարման մարմիններին:

4. Լսեցին - Քանաքարա Հայրապետյանը ներկայացրեց Արցախից բռնի տեղահանված և Գավառի պետական համալսարանում կրթությունը շարունակող ուսանողների կրթական կարիքների վերհանման նպատակով մշակված հարցաթերթի նախագիծը: Նշվեց, որ հարցաթերթի նպատակն է բացահայտել ուսանողների կրթական, սոցիալական, հոգեբանական և ակադեմիական աջակցության կարիքները՝ համալսարանի կողմից նպատակային աջակցություն կազմակերպելու համար:

Որոշեցին

1. Իրականացնել հարցումը հնարավորինս սեղմ ժամկետներում:
2. Արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատին և մշակել անհրաժեշտ աջակցության միջոցառումների ծրագիր:

5. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց Որակի ապահովման բաժնի և Ակադեմիական քաղաքականության բաժնի կողմից համատեղ մշակած 2023–2024 ուսումնական տարվա դասալսումների ժամանակացույցի նախագիծը: Նշվեց, որ դասալսումները նպատակ ունեն գնահատելու դասավանդման որակը, ուսանողակենտրոն ուսուցման մեթոդների կիրառումը, գնահատման գործընթացների թափանցիկությունը և կրթական ծրագրերի իրականացման արդյունավետությունը:

Քննարկեցին - Մասնակիցները կարևորեցին դասալսումների իրականացումը միասնական չափանիշներով, արդյունքների ամփոփումը և դրանց հիման վրա դասախոսներին կառուցողական հետադարձ կապի տրամադրումը:

Որոշեցին

1. Հաստատել Որակի ապահովման բաժնի և Ակադեմիական քաղաքականության բաժնի համատեղ դասալսումների ժամանակացույցը:

2. Յուրաքանչյուր դասալսումից հետո կազմել ամփոփ տեղեկանք և անհրաժեշտության դեպքում ներկայացնել դասավանդման բարելավման առաջարկություններ:
3. Ուսումնական տարվա ավարտին դասալսումների արդյունքների վերլուծական հաշվետվությունը ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ, ակադեմիական քաղաքականության, արտաքին կապերի և լրատվության բաժիններ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2023 թվականի նոյեմբեր 25-ի

թիվ 3 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Գավառի պետական համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծություն մասին:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի ժ/պ Քանաքարա Հայրապետյան/

2. Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) կողմից ս.թ. նոյեմբերի 16-ին իրականացված մշտադիտարկման մասին:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի ժ/պ Քանաքարա Հայրապետյան/

1. Լսեցին - Քանաքարա Հայրապետյանը ներկայացրեց Գավառի պետական համալսարանի շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծությունը: Նշվեց, որ հարցման նպատակն էր գնահատել շրջանավարտների կարծիքը ՄԿԾ-ների բովանդակության, ձեռք բերված մասնագիտական կարողությունների, աշխատաշուկայի պահանջներին համապատասխանության, դասավանդման որակի, պրակտիկաների արդյունավետության և համալսարանի կողմից տրամադրված կրթական ծառայությունների վերաբերյալ:

Վերլուծության արդյունքներով արձանագրվեց, որ շրջանավարտների մեծամասնությունը դրական է գնահատել ստացած կրթության որակը, դասախոսական կազմի մասնագիտական կարողությունները և համալսարանում ձևավորված կրթական միջավայրը: Միաժամանակ առանձնացվել են բարելավման ենթակա ուղղություններ՝ գործնական հմտությունների բարելավում, գործատուների հետ համագործակցության ակտիվացում, կարիերայի զարգացման աջակցության ծառայությունների կատարելագործում և այլն:

Քննարկեցին - Նիստի մասնակիցներն ընդգծեցին, որ շրջանավարտների հետադարձ կապը կարևոր տեղեկատվական աղբյուր է ՄԿԾ-ների շարունակական բարելավման համար: Առաջարկվեց հարցման արդյունքները քննարկել

ֆակուլտետներում և ամբիոններում՝ ՄԿԾ-ների վերանայման գործընթացում դրանց կիրառելիությունն ապահովելու նպատակով:

Որոշեցին

1. Շրջանավարտների բավարարվածության գնահատման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատին, գիտական խորհրդին, ֆակուլտետներին և ամբիոններին:
2. ՄԿԾ-ների վերանայման ընթացքում հաշվի առնել շրջանավարտների կողմից ներկայացված առաջարկությունները:

2. Լսեցին - Քանաքարա Հայրապետյանը ներկայացրեց Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոնի (ՈԱԱԿ) կողմից 2023 թվականի նոյեմբերի 16-ին իրականացված մշտադիտարկման ընթացքը, հիմնական դիտարկումները և առաջարկությունները:

Նշվեց, որ մշտադիտարկման ընթացքում քննարկվել են համալսարանի ներքին որակի ապահովման համակարգի արդյունավետությունը, ՄԿԾ-ների շարունակական բարելավման գործընթացները, շահակիցների ներգրավվածության մեխանիզմները, որակի ապահովման փաստաթղթավորումը և նախորդ արտաքին գնահատման առաջարկությունների կատարման ընթացքը:

Որոշեցին

1. Ուսումնասիրել ՈԱԱԿ-ի կողմից ներկայացված բոլոր առաջարկություններն ու խորհրդատվությունները:
2. Ապահովել արտաքին գնահատման արդյունքների քննարկումը ֆակուլտետներում, ամբիոններում և համալսարանի ղեկավար մարմիններում՝ բարելավումների իրականացման միասնական մոտեցում ձևավորելու նպատակով:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ, ակադեմիական քաղաքականության բաժիններ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ Մ. Նախրատյան

Գավառի պետական համալսարանի

որակի ապահովման բաժնի

2024 թվականի փետրվարի 3-ի թիվ 4 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. ԳՊՀ հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծության մասին: /Զեկուցող՝ ՈԱԲ մասնագետ Մարիամ Նախրատյան/
2. Գավառի պետական համալսարանում ուսումնական գործընթացից առկա և հեռակա ուսուցման բաժինների ուսանողների բավարարվածության գնահատման արդյունքների վերլուծության մասին: /Զեկուցող՝ ՈԱԲ վարիչ Ք. Հայրապետյան/
3. ԳՊՀ–դպրոցներ համագործակցության զարգացման ուղղությունների մասին: /Զեկուցող՝ ՈԱԲ մասնագետ Ն. Մուրադյան/

1. Լսեցին - Մարիամ Նախրատյանը ներկայացրեց հեռակա ուսուցման առաջին կուրսի ուսանողների կարիքների վերհանման հարցման արդյունքների վերլուծությունը: Նշվեց, որ հարցման նպատակն էր գնահատել ուսանողների ակադեմիական, կրթական կարիքները:

Քննարկեցին - Նիստի մասնակիցները արձանագրեցին, որ հեռակա ուսուցման առանձնահատկությունները պահանջում են տեղեկատվական և ակադեմիական աջակցության լրացուցիչ միջոցառումներ: Առաջարկվեց պարբերաբար ուսումնասիրել հեռակա ուսուցման ուսանողների կարիքների և դրանց հիման վրա կատարել գործընթացների բարելավում:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները տրամադրել ֆակուլտետներին և ակադեմիական խորհրդատուներին:

2. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց առկա և հեռակա ուսուցման բաժինների ուսանողների բավարարվածության գնահատման արդյունքները:

Վերլուծությունը ցույց տվեց, որ ուսանողները հիմնականում դրական են գնահատում դասավանդման կազմակերպումը, դասախոսների մասնագիտական պատրաստվածությունը և կրթական միջավայրը: Միաժամանակ արձանագրվեցին բարելավման ենթակա ոլորտներ՝ կապված էլեկտրոնային ռեսուրսների հասանելիության, ուսումնական նյութերի արդիականացման և հետադարձ կապի արդյունավետության հետ:

Քննարկեցին - Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ ուսանողների կարծիքների համակարգված ուսումնասիրությունը պետք է դառնա ՄԿԾ-ների շարունակական բարելավման հիմք:

Որոշեցին

1. Արդյունքները ներկայացնել ֆակուլտետների խորհուրդների, ռեկտորատի և գիտխորհրդի քննարկմանը:
2. Մշակել բարելավման միջոցառումների ծրագիր՝ ըստ բացահայտված խնդիրների:

3. Լսեցին - Ն. Մուրադյանը ներկայացրեց ԳՊՀ–դպրոցներ համագործակցության ուղղությամբ իրականացված աշխատանքները և զարգացման հնարավորությունները:

Նշվեց, որ համագործակցությունը ներառում է մասնագիտական կողմնորոշման հանդիպումներ, բաց դասեր, տեղեկատվական այցեր, ինչպես նաև հանրակրթական դպրոցների ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ուղղված միջոցառումներ:

Արտահայտվեցին - Նիստի մասնակիցներն առաջարկեցին ընդլայնել համագործակցությունը մարզի դպրոցների հետ՝ առավել ակտիվ ներգրավելով համալսարանի դասախոսներին, ուսանողներին և շրջանավարտներին:

Առաջարկվեց նաև պարբերաբար իրականացնել դպրոցների տնօրենների, ուսուցիչների և աշակերտների կարիքների ուսումնասիրություն՝ համագործակցության արդյունավետությունը գնահատելու նպատակով:

Որոշեցին

1. Կազմակերպել մասնագիտական կողմնորոշման և բաց դասերի շարք մարզի դպրոցներում:

2. Տարեվերջին գնահատել համագործակցության արդյունքները՝ շահակիցների կարծիքների ուսումնասիրության հիման վրա և ներկայացնել հաշվետվություն ՈԱԲ նիստին:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ, ակադեմիական քաղաքականության բաժիններ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2024 թվականի մարտի 23-ի

թիվ 5 նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Գավառի պետական համալսարանի և Գեղարքունիքի մարզի միջնակարգ, հանրակրթական և ավագ դպրոցների հետ պայմանագրերի վերակնքման աշխատանքների մասին հարցը:

/Զեկուցող՝ Որակի բաժնի վարիչ Ք. Հայրապետյան/

2. Գավառի պետական համալսարանի ուսումնական ռեսուրսներից ուսանողների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծության մասին հարցը:

/Զեկուցող՝ Որակի բաժնի մասնագետ Ն. Մուրադյան/

3. Արցախից բռնի տեղահանված և Գավառի պետական համալսարանում կրթությունը շարունակող ուսանողների կրթական կարիքների վերհանմանը միտված հարցման արդյունքների վերլուծության մասին հարցը:

/Զեկուցող՝ Որակի բաժնի վարիչ Ք. Հայրապետյան/

4. Գավառի պետական համալսարանում հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետությունից ԳՊՀ ուսանողների բավարարվածության գնահատման հարցաթերթի վերլուծության մասին հարցը:

/Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի մասնագետ Ք. Հայրապետյան/

1. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց Գավառի պետական համալսարանի և Գեղարքունիքի մարզի հանրակրթական դպրոցների հետ համագործակցության պայմանագրերի վերակնքման ընթացքը: Նշվեց, որ համագործակցության նպատակը բուհ–դպրոց կապի ամրապնդումն է, մասնագիտական կողմնորոշման աշխատանքների ակտիվացումը, աշակերտների կրթական կարիքների ուսումնասիրությունը, ինչպես նաև ուսուցիչների մասնագիտական զարգացմանն ուղղված համատեղ նախաձեռնությունների իրականացումը, ԳՊՀ ուսանողների մանկավարժական, արտադրական պրակտիաների բազանեի ընդլայնումը:

Քննարկեցին - Մասնակիցներն ընդգծեցին, որ համագործակցությունը պետք է հիմնված լինի ոչ միայն պայմանագրային հարաբերությունների, այլև համատեղ միջոցառումների, կարիքների պարբերական գնահատման և արդյունքների գնահատման վրա: Առաջարկվեց համագործակցության ծրագրերում ներառել բաց դասախոսություններ, համալսարանական բաց դռների օրեր և ուսուցիչների վերապատրաստումներ:

Որոշեցին

1. Ավարտել համագործակցության պայմանագրերի վերակնքման գործընթացը:
2. Ուսումնական տարվա ավարտին գնահատել համագործակցության արդյունավետությունը՝ դպրոցների ներկայացուցիչների կարծիքների հիման վրա:

2. Լսեցին - Ն. Մուրադյանը ներկայացրեց ուսումնական ռեսուրսներից ուսանողների բավարարվածության գնահատման հարցման արդյունքները: Արդյունքների համաձայն՝ ուսանողները հիմնականում դրական են գնահատել գրադարանային և էլեկտրոնային ռեսուրսների հասանելիությունը, սակայն նշել են առանձին դասընթացներում ուսումնամեթոդական նյութերի թարմացման, էլեկտրոնային ռեսուրսների համալրման անհրաժեշտությունը:

Քննարկեցին - Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ կրթական ռեսուրսների շարունակական արդիականացումը կրթության որակի ապահովման կարևոր բաղադրիչ է: Առաջարկվեց պարբերաբար ուսումնասիրել ուսանողների բավարարվածությունը և արդյունքները կիրառել ռեսուրսների զարգացման գործընթացում:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

3. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց Արցախից բռնի տեղահանված և ԳՊՀ-ում ուսումնառությունը շարունակող ուսանողների կրթական կարիքների վերհանման հարցման արդյունքները: Նշվեց, որ հարցման նպատակն էր բացահայտել

ուսանողների կրթական, սոցիալական և հոգեբանական աջակցության կարիքները, ինչպես նաև գնահատել նրանց ինտեգրման ընթացքը համալսարանական միջավայրում:

Հարցման արդյունքներով առանձնացվեցին ակադեմիական խորհրդատվության, ուսումնական նյութերի հասանելիության, սոցիալական աջակցության անհրաժեշտության հարցերը:

Որոշեցին

1. Արցախից բռնի տեղահանված ուսանողների համար ապահովել կրթական և խորհրդատվական ծառայությունների հասանելիությունը:
2. Հարցման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

4. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց հետազոտական գործունեության և ուսումնական գործընթացի համադրման արդյունավետության վերաբերյալ ուսանողների բավարարվածության գնահատման հարցման արդյունքները: Վերլուծությունը ցույց տվեց, որ ուսանողները դրական են գնահատում գիտաժողովներին մասնակցելու հնարավորությունները:

Քննարկեցին - Մասնակիցներն ընդգծեցին, որ հետազոտական գործունեության վրա հիմնված ուսուցման կազմակերպումը կարևոր նախապայման է ՄԿԾ-ների որակի բարձրացման և ուսանողների հետազոտական կարողությունների ձևավորման համար:

Առաջարկվեց խրախուսել ուսանողների մասնակցությունը գիտաժողովներին, ամբիոնների գիտական աշխատանքներին:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:
2. Մշակել ուսանողների հետազոտական գործունեության խթանման միջոցառումների ծրագիր, առաջարկությունները ներկայացնել Ակադեմիական քաղաքականության բաժին՝ քննարկման:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ, ակադեմիական քաղաքականության, արտաքին կապերի և լրատվության բաժիններ, ՈՒԽ, ՈՒԳ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**

Գավառի պետական համալսարանի որակի ապահովման բաժնի

2024 թվականի հունիսի 29 թիվ 6

նիստի արձանագրություն

ՕՐԱԿԱՐԳ՝

1. Գործատուների կողմից Գավառի պետական համալսարանի պրակտիկայի մասնակից ուսանողների մասնագիտական գիտելիքների և կարողությունների գնահատման արդյունքների վերլուծության մասին:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյան/

2. Դպրոց–բուհ համագործակցության ծրագրի շրջանակում մարզի հիմնական և ավագ դպրոցներ կատարած այցելությունների և դիմորդների կարիքների վերհանման վերաբերյալ հարցման արդյունքների վերլուծության մասին:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյան/

3. Գավառի պետական համալսարանում ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության գնահատման հարցման արդյունքների վերլուծության մասին:

   /Զեկուցող՝ Որակի ապահովման բաժնի վարիչ Ք. Հայրապետյան/

4. Գավառի պետական համալսարանում իրականացված դասալսումների արդյունքների վերլուծության և դասավանդման որակի բարելավման ուղղությամբ առաջարկությունների քննարկման մասին:

   /Զեկուցող՝ ԱՔԲ վարիչ Օլգա Ղազարյան/

1. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց գործատուների կողմից պրակտիկայի մասնակից ուսանողների մասնագիտական գիտելիքների, գործնական կարողությունների, մասնագիտական հաղորդակցման և աշխատանքային պատասխանատվության վերաբերյալ իրականացված գնահատման արդյունքների վերլուծությունը: Նշվեց, որ գործատուները հիմնականում դրական են գնահատել ուսանողների մասնագիտական պատրաստվածությունը, համագործակցային աշխատանքի հմտությունները և նոր միջավայրին արագ հարմարվելու կարողությունը: Միաժամանակ արձանագրվել է գործնական փորձի,

մասնագիտական հաղորդակցման և թվային գործիքների կիրառման հմտությունների հետագա զարգացման անհրաժեշտությունը:

Քննարկեցին - Նիստի մասնակիցները կարևորեցին գործատուների հետ շարունակական հետադարձ կապի ապահովումը՝ որպես կրթական ծրագրերի կատարելագործման կարևոր աղբյուր: Առաջարկվեց առավել ակտիվ ներգրավել գործատուներին ՄԿԾ-ների վերանայման և պրակտիկաների կազմակերպման գործընթացներում:

Որոշեցին -

1. Հարցման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:
2. ՄԿԾ-ների վերանայման ընթացքում հաշվի առնել գործնական կարողությունների զարգացման վերաբերյալ առաջարկությունները:

2. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց դպրոց–բուհ համագործակցության շրջանակում մարզի հիմնական և ավագ դպրոցներ կատարված այցելությունների արդյունքները և դիմորդների կարիքների վերհանման հարցման վերլուծությունը: Նշվեց, որ դպրոցներում իրականացված հանդիպումները նպաստել են համալսարանի ՄԿԾ-ների ներկայացմանը, մասնագիտական կողմնորոշմանը և ապագա դիմորդների ակնկալիքների բացահայտմանը: Հարցման արդյունքները ցույց տվեցին, որ աշակերտները հետաքրքրված են առավել գործնական ուղղվածությամբ կրթությամբ, միջազգային ծրագրերով, ժամանակակից մասնագիտություններով:

Քննարկեցին - Մասնակիցները կարևորեցին դպրոցների հետ համակարգված համագործակցության շարունակական զարգացումը և դիմորդների կարիքների պարբերական ուսումնասիրությունը՝ ընդունելության գործընթացն առավել արդյունաավետ կազմակերպելու համար:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի և գիտական խորհրդի քննարկմանը:

2. Շարունակել մարզի դպրոցներում մասնագիտական կողմնորոշման միջոցառումների իրականացումը:
3. Ամեն տարի իրականացնել դիմորդների կարիքների ուսումնասիրություն և արդյունքները ներառել ընդունելության ռազմավարության մշակման գործընթացում:

3. Լսեցին - Ք. Հայրապետյանը ներկայացրեց շրջանավարտների շրջանում իրականացված հարցման արդյունքների վերլուծությունը: Արձանագրվեց, որ շրջանավարտների մեծ մասը դրական է գնահատում համալսարանում ստացած մասնագիտական գիտելիքները, դասախոսական կազմի մասնագիտական կարողությունները և ուսումնական միջավայրը:

Քննարկեցին - Քննարկման ընթացքում ընդգծվեց, որ շրջանավարտների հետադարձ կապը կարևոր տեղեկատվական աղբյուր է ՄԿԾ-ների արդիականացման և աշխատաշուկայի պահանջներին համապատասխանեցման համար:

Որոշեցին

1. Հարցման արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի, գիտական և ֆակուլտետների խորհուրդների քննարկմանը:
2. ՄԿԾ-ների վերանայման ընթացքում հաշվի առնել շրջանավարտների առաջարկությունները:

4. Լսեցին – Օլգա Ղազարյանը ներկայացրեց 2023–2024 ուսումնական տարվա ընթացքում իրականացված դասալսումների արդյունքների վերլուծությունը:

Ներկայացվեցին դասալսումների ընթացքում արձանագրված ուժեղ կողմերը, ինչպես նաև բարելավման ենթակա ոլորտները: Նշվեց, որ դասախոսների մեծ մասը կիրառում է ուսանողակենտրոն դասավանդման մեթոդներ, սակայն անհրաժեշտ է առավել լայն կիրառել ակտիվ ուսուցման մեթոդներ, թվային կրթական գործիքներ և ձևավորող գնահատման մոտեցումներ:

Քննարկեցին - Մասնակիցները կարևորեցին դասալսումների արդյունքների օգտագործումը դասախոսների մասնագիտական զարգացման պլանավորման և դասավանդման որակի շարունակական բարելավման նպատակով:

Որոշեցին

1. Դասալսումների արդյունքները ներկայացնել ԳՊՀ ռեկտորատի, գիտական և ֆակուլտետների խորհուրդների քննարկմանը:
2. Կազմակերպել վերապատրաստումներ ուսանողակենտրոն դասավանդման, թվային տեխնոլոգիաների, արհեստական բանականության գործիքների կիրառման ուղղությամբ:
3. Հաջորդ ուսումնական տարում շարունակել իրականացնել դասալսումներ՝ բարելավումների արդյունավետությունը գնահատելու նպատակով:

Պատասխանատու՝ ԳՊՀ ՈԱ, ակադեմիական քաղաքականության, արտաքին կապերի և լրատվության բաժիններ, ՈՒԽ, ՈՒԳ, ֆակուլտետներ, ամբիոնի վարիչներ:

ՈԱԲ նիստը նախագահող՝ **Ք. Հայրապետյան**

Քարտուղար՝ **Մ. Նախրատյան**